



ԼԵՆՐ Լ. ՏԵՐ-ՊԵՏՐՈՍՅԱՆ

**ԿՅՈՒՐԵՂ ԵՐՈՒՍԱՂԵՄԱՅՈՒ «ԿՈՉՈՒՄՆ ԸՆԾԱՅՈՒԹԵԱՆ»
ԵՐԿԻ ՀԱՅԵՐԵՆ ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽՈՐԻՆԱԿԻ
ՀԱՐՑԻ ՇՈՒՐՁԸ**

Կյուրեղ Երուսաղեմացու (մահ. 386 թ.) «Կոչոթն ընծայութեան» (ⲕⲟⲩⲱⲩⲱⲩⲛ ⲉⲛⲅⲁⲩⲱⲩⲱⲩⲛ) խորագիրը կրող հանրահայտ ճառերի հունարեն բնագիրը¹ քաղկացած է երեք մասից. ա. «Նախակոչումն ընծայութեան» (ⲛⲁⲭⲁⲕⲟⲩⲱⲩⲛ ⲉⲛⲅⲁⲩⲱⲩⲱⲩⲛ)², բ. մկրտության խորհրդին նվիրված 18 ճառեր (ⲙⲕⲣⲱⲩⲱⲩⲛ ⲉⲛⲅⲁⲩⲱⲩⲱⲩⲛ)³, գ. նոր մկրտվողներին ուղղված 5 քարոզներ (ⲛⲟⲩ ⲙⲕⲣⲱⲩⲱⲩⲛ ⲉⲛⲅⲁⲩⲱⲩⲱⲩⲛ)⁴: Հայերենով հայտնի է միայն աշխատության երկրորդ մասը⁵, որ բանասերներին հիմք է տվել հայերեն բնագիրը թերի համարելու: Սակայն հարցին մոտենալով մի այլ կողմից, Վ. Սվանսը Կյուրեղ Երուսաղեմացու երկի հայերեն, ինչպես նաև ասորա-պաղեստինյան թարգմանություններում վերջին հինգ քարոզների քաղկայությունը դիտում է որպես կարևոր

կոչված հոգուտ վաղուց առաջ քաշված այն տեսակետի, որ դրանք չեն պատկանում Կյուրեղի գրչին, հետևաբար հայերեն թարգմանության հունական նախորինակում չեն եղել: Ինչ վերաբերում է «Նախակոչումն ընծայութեան» ճառին, ապա այն, Վ. Սվանսի կարծիքով, կարող էր սարգսպես թարգմանիչների կողմից աշխատության մաս համարվել: 1972 թ. հայագետ Ա. Թրևուն հրատարակեց հայերեն մի փոքրիկ հատված Կյուրեղին վերագրվող 23-րդ ճառից, որը սակայն, ամենայն հավանականությամբ, քաղված է ոչ թե հայերեն մի ամբողջական բնագրից, այլ թարգմանված է հունական որևէ պատրաստի քաղվածաշարից:

Կյուրեղ Երուսաղեմացու երկամիությունը խոր հետք է թողել հայ մատենագրության մեջ, եղել է միջնադարում ամենաշատ ընթերցվող գրքերից մեկը, որպես հեղինակություն վկայակոչվել է քաղմաթիվ դավանաբանական ժողովածուներում և հակաճատություններում, ամբողջովին կամ հատվածաբար ընդօրինակվել տասնյակ

¹ St'a J.-P. Migne, *Patrologia graeca*, t. 33, Paris, 1857, p. 331—1128.

² Անդ, էջ 331—306:

³ Անդ, էջ 309—1090:

⁴ Անդ, էջ 1065—1125:

⁵ St'a «Երանելոյն Կիրոյի Երուսաղեմաց հայրապետի Կոչումն ընծայութեան», Վիեննա, 1832:

⁶ Հմմտ. Լ. Գ. Ջաթրհանյան, *Մատենադարան հայկական թարգմանութեանց նախնայ, Վիեննայի, 1880, էջ 524. Լ. Յ. Տաշեան, Յուդայ հայերեն ձեռագրայն Մատենադարանին Մոխթարեանցի Վիեննա, Վիեննա, 1895, էջ 694: Ս. Բոլանջյան, Նորամայր պատմիկներ Կյուրեղ Երուսաղեմացու Թ հարի մի գրչագրից, «Վանքի Մատենադարան», հատ. 5, Նքևան, 1900, էջ 203:*

⁷ St'a W. J. Swaans, *À propos des „Catéchèses Mystagogiques“ attribuées à S. Cyrille de Jérusalem*, „Le Muséon“, t. 55, Louvain, 1942, p. 28—29.

⁸ Անդ, էջ 29:

⁹ St'a A. Renoux, *Une version arménienne des Catéchèses Mystagogiques de Cyrille de Jérusalem*, „Le Muséon“, t. 85, Louvain, 1972, p. 147—153.

ձեռագրերում: Ուստի հայերեն թարգմանության հանգամանքների և առանձնահատկությունների պարզաբանումը մեր բանասիրության կարևոր խնդիրներից է հանդիսանում:

Հայագիտության մեջ արմատացած է այն տեսակետը, որ Կյուրեղ Երուսաղեմացու «Կոչումն ընծայութեան» երկի հայերեն բնագիրը պատկանում է հայ թարգմանական գրականության առաջին շրջանի՝ Վդ. թարգմանությունների թվին¹⁰, որի անառարկելի վկայությունն է նրա դասական լեզուն: Ինչ վերաբերում է թարգմանության նախօրինակի հարցին, ապա նրա մասին հայտնվել են տարբեր կարծիքներ: Նորայր Բյուզանդացին, Ն. Անդրիկյանը Թ. Թոռնյանը և Եղիշե արքեպ. Դուրյանը «Կոչումն ընծայութեան» երկի հայերեն բնագիրը, առանց որևէ բացատրության, դասել են ասորերենից կատարված ոսկեդարյան թարգմանությունների շարքը¹¹: Համեմատաբար վերջերս Կյուրեղի խնդրո առարկա աշխատության նորահայտ պատմիկների ուսումնասիրության առիթով սույն կարծիքի հիմնավորման մի փորձ է կատարել Ս. Քոլանջյանը, հաշվի առնելով Հ. Տաշյանի այն դիտողությունը, որ «հայը շատ կը շեղի լուսարեւեն»¹², և ուշադրություն հրավիրելով այն փաստի վրա, որ հայերեն բնագրում մի շարք աստվածաշնչական անուններ, ինչպես՝ Եղիշա կամ Եղիշե, Յմատոն և այլն, տառադարձված են ասորական ձևով¹³:

Մյուս տեսակետը, որի համաձայն Կյուրեղի «Կոչումն ընծայութեան» երկը հայերեն է թարգմանվել հունարենից, հստակորեն շարադրված է Հ. Ն. Ակինյանի գեր-

մաներեն մի նամակում՝ ուղղված հայագետ Ս. Լիոնեին. «Վաղուց ի վեր իմ հաստատ համոզումն է եղել, որ հիշատակված թարգմանությունը կատարվել է ուղղակի հունարենից: Հունարենի հետքերը նրանում այնքան ակնառու են, որ ինձ զարմաց է պատճառում, երբ հանգում եմ ասորական նախօրինակ ենթադրելուն: Որքան գիտեմ, առաջին անգամ Նորայր Բյուզանդացին է հայտնել այս կարծիքը, որին հետևել է Թոռնյանը: Ոչ ոք ապացույցներ չի բերել: Շշմարիտ է, որ հայ թարգմանիչը, որն իր գործը շարադրել է պերճաշուք լեզվով և դասական ոճով, տեղ-տեղ իրեն թույլ է տվել օգտագործել որոշ արտահայտություններ, որոնք ավելի հատուկ են սեմական լեզուներին¹⁴, թեև հայերենին նույնպես խորթ չեն: Դա, ի դեպ, ցույց է տալիս, որ թարգմանիչը հավանաբար ծանոթ է եղել ասորերենին: Դուք կարող եք վստահ լինել, որ «Կոչումն ընծայութեան» հայերեն թարգմանության նախօրինակը հունարեն բնագիր է եղել»¹⁵:

Այսպիսով, ինչպես տեսնում ենք, հայերեն թարգմանության նախօրինակի հարցը դեռևս չի ստացել իր վերջնական լուծումը, քանի որ Հ. Ն. Ակինյանի տեսակետը նույնպես անհրաժեշտ չափով փաստարկված չէ: Այդ պատճառով հարկ ենք համարում ստորև հանգամանորեն անդրադառնալ տվյալ խնդրին:

Մանրամասն բնագրական համեմատությունը ցույց է տալիս, որ հայերեն թարգմանությունը հարազատորեն հետևում է հունարեն բնագրին, որպես կանոն չխախտելով նրա ընթացքը, չկատարելով որևէ էական հավելում կամ բացթողում, պահպանելով և հաճախ նույնիսկ պատճենելով նրա շարադասական ու բառակազմական առանձնահատկությունները:

Այսպես, հայ թարգմանիչը հունական բնագրի ժխտական նախածանց ունեցող բառերի դիմաց կանոնավոր կերպով դնում է նրանց հայերեն համարժեքները, օրինակ. անվարձ [388]¹⁶ = ἀμειψος [1017], ան-

¹⁰ Հմմտ. Հ. Գ. Զարբանյան, Մատենադարան..., էջ 524. Հ. Ն. Ակինյան, Դասական հայերենը և վիեճակյան Մխիթարեան դպրոցը, Վիեննա, 1932, էջ 42 և այլն:

¹¹ Տե՛ս Նորայր Բյուզանդացի, Կորին վարդապետ և նորին թարգմանությունը, Տիֆլիս, 1900, էջ 30. Ն. Անդրիկյան, Գեղեցիկը լեզուին մեջ, «Բազմավեպ», 1907, էջ 512, 516. Թ. Թոռնյան, Հատընտիր ընթերցուածք ի մատենագրութեանց նախնեաց երկրորդ, երրորդ և չորրորդ դասուց, հատ. Բ, Վիեննա, 1910, էջ 11: Եղիշե արքեպ. Դուրեան, Պատմություն հայ մատենագրութեան, Երուսաղեմ, 1933, էջ 24. Վ. Սվանսը թյուրիմացաբար այս տեսակետը պաշտպանողների շարքն է դասում նաև Հ. Ն. Ակինյանին. տե՛ս W. Swaans, À propos des «Catéchèses...», p. 29.

¹² Տե՛ս Հ. Յ. Տաշյան, Յոցակ..., էջ 694:

¹³ Տե՛ս Ս. Քոլանջյան, Նորահայտ պատմիկներ..., էջ 208—204:

¹⁴ Հ. Ն. Ակինյանը նկատի ունի Թ. Թոռնյանի այն դիտողությունը, որ թարգմանության մեջ հանդիպում են «սեմական լեզուի քանի մը ասացուածք». տե՛ս Թ. Թոռնյան, Հատընտիր ընթերցուածք..., էջ 11:

¹⁵ Տե՛ս S. Lyonnet, Les origines de la version arménienne et le Diatessaron (Biblica et Orientalia, 13). Roma, 1950, p. 111.

¹⁶ Հայերեն բնագրի քաղվածքներին կցված փակագծերում նշվում են Կյուրեղ Երուսաղեմացու երկի վիեննական հրատարակության էջերը (տե՛ս ծանոթ.

պիտան [403] = *ἀντιπικτικός* [1024], անշար-
ժական [403] = *ἀνίσχυτος* [1025], անմիտ
[413] = *ἀφρον* [1037], անմոլար [415] =
ἀνέμωτος [1041] և այլն:

Հայերեն բնագրում համարյա միշտ գե-
րադրական աստիճանով են դրված այն
ածականները, որոնք հունարենում նույն-
պես օգտագործված են գերադրական աս-
տիճանով, ինչպես. պատրաստագոյն [2] =
ἐκπαιστωτός [372], չարագոյն [11] = *κακώτερος*
[385], ճշմարտագոյն [411] = *αληθέστερος*
[1036] և այլն: Համախ նույն ձևով է
վերադրադրված նաև ածականների համե-
մատական աստիճանը, օրինակ. քաղցրա-
գոյն [35] = *γλυκύτερος* [436], օգտակարա-
գոյն [35] = *ωφέλιμότερος* [436], երկայնա-
գոյն [148] = *μακρότερος* [644] և այլն:

Շատ ավելի հաճախակի են այն դեպ-
քերը, երբ հայերեն թարգմանության մեջ
գործածված բարդ բառերը իրենց քաղա-
դրիչներով միանգամայն համընկնում են
հունական բառարարություններին, այս-
պես. պտղաբեր [4] = *καρποφόρος* [375],
ծառույակից [6] = *δενδρόειος* [377], որդե-
հայրություն [51] = *γονιμοποιός* [465], աստ-
ուածահար [109] = *θεοπληχτής* [580], եր-
կակնեղան [152] = *διφιδεύς* [649], որդե-
ծնություն [155] = *γεννησιον* [653], հագիա-
խօս [210] = *μεγίστος* [737], կուսարար
[299] = *καρποποιός* [765] և այլն: Ի դեպ,
վերջին երկու բառերը հայ մատենագրու-
թյան մեջ ծանոթ չեն այլ աղբյուրներից:

Երբեմն, կարծես չբավարարվելով մեկ
բառապատկանով, թարգմանիչը տալիս է
միանգամից երկուսը, ինչպես. փշաբեր
տատասկաբեր [13] = *ἀκτινοφόρος* [389],
ոսկիապատ ոսկիակոտ [20] = *χρυσόκοιτης*
[397], համբաակոն ցնորակոն առ-
նել [312] = *φαντασιακόπαιον* [884], դիա-
կապուտ գերեզմանակրկիտ [402] = *τοξόφα-
γος* [1021], անասուն անբան [405] =
ἀνέρος [1028] և այլն: Հատկանշական
է, որ համբաակոն և ցնորակոն բառերի
համար նույնպես «Նոր Հայկազյան բառա-
րանը» վկայակոչում է միայն այս աղբյու-
րը¹⁷:

Նշված բնույթի բառային համապատաս-
խանություններն ինքնին վերցրած դեռևս
չեն կարող հայերեն և հունարեն բնագրերի

առնչակցության ապացույց համարվել, քա-
նի որ նույնպիսի բառարարություններ
հանդիպում են նաև ասորերենից թարգման-
ված բնագրերում¹⁸: Սակայն, երբ խոսքը վե-
րաբերում է հայերեն և հունարեն բնագրե-
րում այդպիսի բառերի կանոնավոր հան-
դիպակացության հարյուրավոր, եթե չա-
սենք՝ հազարավոր դեպքերի, ապա չի կա-
րելի դա բնագրերի կապն ապացուցող
կարևոր փաստ չդիտել:

Բարեբախտաբար «Կոչումն բնծայութեան»
երկի հայերեն թարգմանությունը պա-
րունակում է նաև հունական բնագրին հա-
մապատասխանող այնպիսի տարրեր, որոնք
արդեն ոչ մի կերպ հնարավոր չէ բացատ-
րել ասորերենի միջնորդությամբ: Իրան-
ցից են, օրինակ, ածանցավոր կամ բարդ
բառերից կազմված ածականների գերա-
դրական աստիճանի հետևյալ ձևերը. աճօ-
րինագոյն [22, 28] = *αδωροποιός* [401,
424], անաստուածագոյն [117] = *ἀνθεωποιός*
[597], թեբահաւաւագոյն [140] =
θεοεραστής [632], անմտագոյն [331] =
ἀνθεωποιός [912], մեծարաբբառագոյն
[360] = *μεγαλοφρονέτης* [960]¹⁹: Եթե
հունարեն և հայերեն բնագրերի միջև ասո-
րական միջանկյալ օղակ լինել, ապա ան-
հնար է, որ նշված բառակազմությունները
իրենց երեքական քաղադրիչներով (նա-
խածանց-բառարմատ-վերջածանց կամ բա-
ռարմատ-բառարմատ-վերջածանց) քացար-
ձակապես համընկնեին իրար, քանի որ աս-
տիճանները նախ բավականին դժվարանում
է բարդ բառերի ստեղծման հարցում, երկ-
րորդ՝ չունի ածականի գերադրական աս-
տիճանի կազմության հատուկ ձև և դրա
համար դիմում է նկարագրական եղանա-
կի օգնությանը: Համեմատական աստիճա-
նի համար այն սովորաբար գործածում է
yatir men (ատաւել բան), իսկ գերադրա-
կանի համար՝ *yatir men kul* (ատաւել
բան զամենայն) արտահայտությունները,
որոնք ասորերենից կատարված հայերեն
թարգմանություններում որպես կանոն վեր-
արտադրվում են նույնությամբ:

Հունական նախօրինակի ազդեցության
ուշագրավ հետքերից է նաև Կյուրեղի երկի
հայերեն թարգմանության հետևյալ հատ-
վածը. «Գալիլեացի Էիմ Պետրոս և Ան-
դրեաս, և անդէն վաղմաղակի պարսկա-

5), իսկ հունարեն բաղվածքների կողքին՝ Ժ. — Պ.
Միսիի հրատարակության էջերը (տե՛ս ծանոթ. 1):

¹⁷ Գնորակոն բառի համար բառարանում նշված
է նաև Թովմա Արքունու Պատմությունը:

¹⁸ Հմմտ. Լ. Տեր-Պետրոսյան, Արամիւմ Խոստա-
փանոցի «Աղայր Արևելիցը», Երևան, 1976, էջ 86—
87:

¹⁹ Թերմառատագոյն բառը բացակայում է «Նոր
Հայկազյան բառարանում», մեծարաբբառագոյն բա-
ռի համար այնուպէս նշված է միայն Կյուրեղ Արա-
ստեղծացու վկայակոչումը, իսկ անաստուածագոյն
բառի համար՝ Կյուրեղի և Փիլոնի մեկական կիրա-
րություններ:

նային և պարթևանային» [376]: Պարսկա-
նալ և պարթևանալ բայերը, որոնք «Նոր
Հայկազյան բառարանի» տվյալներով
վկայված չեն այլ աղբյուրներում, պարզա-
պես պատճենված են հունարեն բնագրի
περσικῶ և μεθ'εῖω [988] բառերից: Մի
փոքր տարօրինակ կարող է թվալ այն
հանգամանքը, որ երկրորդ բայի Μῆδος
(մեդացի, մար) արմատի դիմաց հայերե-
նում դրված է պարթև: Ինչպես ստորև կը-
նեսանենք, թարգմանիչն այդպես է վարվում
նաև այդ բառի գործածության մյուս դեպ-
քերում, որ նշանակում է, թե V դ. Հայաս-
տանում մարերի և պարթևների մույնու-
թյան պատկերացում է գոյություն ունեցել:
Հայերեն և հունարեն բնագրերի կապի
պերմաստիս վկայությունն է նաև այս նա-
խադասությունը. «Եւ գրէր առ պատկերի
անդ հոռովմայեցոց լեզուովն՝ Սիմոնի դէի
սանքթո, որ թարգմանեալ կոչի՝ Սիմովնի
սրբոյ աստուծոյ» [102] = ὁποῦ ῥά φαντα τῇ
‘Ρωμαίων γλώττει, Σίμωνι Δεω Σαχτω, ὁπερ
ἐρμηνεύμενον δηλοῖ, Σίμωνι Θεῷ ἄγιῳ [561]:
Դժվար է պատկերացնել, որ ասորական
բնագրի միջնորդությամբ հնարավոր էր
հայերենում ունենալ ընդգծված լատինե-
րեն բառերի համարյա բացարձակորեն
նշգրիտ տառադարձությունը:

Եվ վերջապես, Կյուրեղի երկի հայերեն
թարգմանության նախօրինակի հարցը քն-
նելիս չի կարելի հաշվի չառնել նաև հա-
յերեն բնագրում գործածված հունարեն
բառերի առկայությունը: Խոսքը վերաբե-
րում է ոչ թե հայոց լեզվի ճիմնական բա-
ռապաշարում տեղ գտած հունական փո-
խառություններին (եպիսկոպոս, եկեղեցի,
մարտիրոս, կաթողիկե և այլն), այլ այնպի-
սի բառերի, որոնք համեմատաբար հազվա-
դեպ են պատահում մատենագրական աղ-
բյուրներում: Նման բառերի գործածությունը
սովորաբար սահմանափակվում է թարգ-
մանական հուշարձանների շրջանակներում
և մեծ մասամբ ուղղակի պայմանավորված
է թարգմանության նախօրինակի թելա-
դրանքով: «Կոչումն ընծայութեան» երկի
հայերեն բնագիրը պարունակում է մի ամ-
բողջ շարք այդպիսի բառեր.

Անթեմ [321] = ἀνθεμῖς [897]. «Նոր
Հայկազյան բառարանն» անթեմ բառի հա-
մար նշում է միայն մեր աղբյուրի վկայու-
թյունը, որից և կախված են նրա գործա-
ծության հետագա դեպքերը:

Գրամատիկոս [377. 2 անգամ] = γραμμα-
τικὸς [988]. Նույն բառարանը, որտեղ
այս բառը նշված է գրամատիկոս ձևով,

V դ. մատենագրությունից բերում է ևս եր-
կու վկայակոչում:

Եկեղեցիաստե կամ Եկեղեցիաստե [70,
321] = Ἐκκλησιαστής [500, 886]. Սրա
փոխարեն հայկական մատենագրության
մեջ սովորաբար գործածվում է Ժողովող
բառը, որը պարզապես Ἐκκλησιαστής-ի
հայերեն թարգմանությունն է: Կյուրեղի եր-
կի հայ թարգմանիչը երեք անգամ Եկեղե-
ստե է կոչել նաև Երգ երգոց (Ἀσμα
τῶν ᾠδαίων) գիրքը [էջ 283, 372], հավա-
նաբար այն պատճառով, որ վերջինիս հե-
ղինակությունը նույնպես վերագրվում է
Սողոմոնին:

Չոպա [29, 33, 263] = ὁσσοπας [425,
433, 820]. Չբավարարվելով հունարեն բա-
ռով՝ թարգմանիչը երկու տեղ ալվել է նաև
նրա հայերեն թարգմանությունը՝ Չոպա
մշտիկ [էջ 29]:

Հերեսիովտաք կամ հերեսիովտաք [48,
50, 60, 99, 101 և այլն] = αἰρεσιώτης կամ
αἰρετικὸς [457, 461 և այլն]: Թեև նշ-
ված բառերը այնքան էլ հազվագյուտ չեն
հայ մատենագրության մեջ, սակայն, ինչ-
պես նկատված է «Նոր Հայկազյան բառա-
րանի» հեղինակների կողմից, նրանք չա-
փազանց ստեպ են գործածված «Կոչումն
ընծայութեան» երկի հայերեն բնագրում,
մեր հաշվումներով՝ 45 անգամ, չհաշված
նույն արմատից կազմված հերեսիկոս [47,
72, 330, 419] և հերեսիովուն [99, 101,
107, 311] բառերը:

Ղևտիկոնք [70] = Λευτικόν [590]...
Հայերենում, ինչպես քաջ հայտնի է, ալվելի
գործածական է սույն բառի հայացված
Ղևտական ձևը: Հիշեցնենք, որ ասորական
Աստվածաշնչում այս գիրքը կրում է
Kahnē (Բահանաք) վերնագիրը, որից,
ակնհայտ է, Ղևտիկոնք ընթերցվածը չէր
կարող ծագել:

Մորոս [247, 328] = μωρός [789, 908].
Բառս բավական տարածված է հայ մատե-
նագրության մեջ, իսկ այստեղ այն նշել ենք
միայն հետևյալ նկատառումով: Կյուրեղի
երկի հայերեն թարգմանության մեջ մորոս
բառը առաջին անգամ [էջ 247] գործա-
ծված է Երկրորդ Օրինաց գրքի ԼԲ, 6 համա-
րից կատարված «ժողովուրդ մորոս» քաղ-
վածքում, որը համապատասխանում է հու-
նական նախօրինակի λαός μωρός բառե-
րին: Աստվածաշնչի հայերեն բնագրի նույն
տեղում ունենք «ժողովուրդ յիմար», իսկ
ասորական բնագրում՝ ‘amā saklā ընթերց-
վածները:

Յակիմք ծաղիկ [344] = ὁξινοῦς [933].
«Նոր Հայկազյան բառարանի» տվյալներով
«Կոչումն ընծայութեան» երկի հայերեն

թարգմանությունը նշված բառի գործածության ուղեգրության հազվագյուտ վկայություններին է:

Սուղար [176] = *сулгар* [688]. «Նոր Հայկազյան բառարանում» նշված է բառի գործածության ընդամենը եւ մեկ դեպք:

Սաիքերովն [70] = *саиқыр* [500]. Ըստ «Նոր Հայկազյան բառարանի» խնդրո առարկա հայերեն բնագիրը այս բառի գործածության միակ ուղեգրության վկայությունն է:

Թվում է, նշված փաստերը բավական են համոզվելու համար, որ կյուրեղ երուսաղեմացու «Կոչումն ընծայութեան» երկի հայերեն թարգմանությունը կատարվել է հունարենից, և ենթադրյալ ասորական հոմոգրիֆի մասին առաջ քաշված տեսակետը հիմք չունի: Բնականաբար այս դեպքում հարց է առաջանում, թե ինչպես պետք է բացատրել հայերեն բնագրում ասորերենին համապատասխանող մի շարք հատուկ անունների առկայության փաստը, որի վրա, ինչպես վերը նշեցինք, ուշադրություն է հրավիրել Ս. Քոլանջյանը: Սակայն նախքան նրանց քննությանն անցնելը հարկ ենք համարում ստորև թվարկել «Կոչումն ընծայութեան» երկի հայերեն թարգմանության մեջ հիշատակված բոլոր հատուկ անունները, միատի ունենալով այն հանգամանքը, որ հուշարձանի վիեննական հրատարակությունը անվանացանկ չունի²⁰:

Արել 206²¹, Արեստղոմ 20, Աբիսաբ Սովմանիտացի 220, Աբրահամ 77, Ագարոս 261 (Ագար 390), Ադամ 13, Ադաս 115, Ադոնայ 141, Ագարիա 359, Աթենացիք 389, Ախազ 220, 221 (Աքազ 201), Ամարոն 17, Աղեքսանդրիա 69, Ամբակում 219, Ամուս 257, Անանիա 350, Անգե 360, Անդրեաս 376, Աննա 175, Անտիոք 347 (Անդիոք 386), Ասա[ի] 359, Ասորիք 386, Ասողիկ 50, Արամազդ 225, Արեոսպագոս 389, Արիստոտել 108, Արքեդայոս 112, Աքայար 21, Աքայեցիք 389, Աքրիպաս 390, Բաբիլովն 17, Բաղդասար 362, Բառնարաս 347, Բասիլիդես 104, Բարոք 70, Բեթղեմեմ 195 (Բեդղեմեմ 166), Բենեդիկ 358, Բոսոր 258, Բոք 108, Գաբրիել 145, Գազա 347, Գալիլեա 167, Գաղատացիք 388, Գաղիացիք 354, Գեղեովն 359, Գեեզի 350, Գեթ-

սեման 175, Գողդիել 359, Գողգոթա 2, Գոմոր 259, Գուրք 176, Դամասկոս 173, Դանիել 67, Դարեն Պարթև 218, Դանիթ 14, Դեմետր Փաղեբանց 68, Դովմեսիոս 97 (Դիմեսիոս 225), Երայեցիք 74, Եգիպտոս 108, Եղովմ 258, Եթեովացիք 354, Եզեկիա 22, Եզեկիել 9, Եզր 70, Եղովմայ 388, Եղդադ 357, Եղիա 21, Եղիազար 69, Եղիշա /Եղիշե 286 (3 անգամ), 287, 350 (5 անգամ), 359, 411, 412 (Եղիսեոս 287), Եղիսարթ 224, Ենուս 358, Ենույք 34, Եսայի 1, Եսաի 327, Եսեթ 70, Երեմիա 35, Երիանոս 389, Երիբով 168, Երուսաղեմ 1, Եսայ 115, Երիմացիք 103, Եսիքոս 389 (Եսիքեոս 413), Եսեաոս 389, Եփրադա 219, Զաբարիա 216, Էմմանուել 190, Թափոր 215, Թեման 219, Թեսալոնիկե 389, Թովմայ 71 (Թովմաս 115), Իսահակ 78 (Սահակ 128), Իսրայել 17, Լաբան 228, Լիբանոս 209, Լիբեացիք 354, Լիվեացիք 385, Լիստրացիք 388, Լիբիկոն 385, Լուսին 101, Լալիափա 248, Լալին 15, Լարպոկրատես 103, Լափառնատ 81, Կեղրոն 295, Կեսար 276, Կեսարիա 386, Կերինթոս 103, Կեփա 292, Կիպրոս 388, Կիլիկեցիք 388, Կղատիոս 101, Կողոսացիք 45, Կոռնելիոս 32 (Կոռնելիս 386), Կոստանդ 293, Կորբիկոս 108 (Կորբիկոս 109), Կորնթացիք 159, Լեբնաս 115, Լեբովդես 170, Լեփեստոս 97, Լնդիկք 191, Լուսել 228, Լոովմ 101, Լոոք 70, Լրեստան 108, Լազար 13, Լովա 408, Լուկաս 130, Մակեդոնացիք 388, Մաղաքիա 304, Մանաս 22, Մանի 107, Մանտանոս 340, Մատթե 286, Մարիամ 130, Մարկիովն 103, Մարկոս 379, Մարոսք 354, Մարսիմիդա 340, Մելիտե 390, Մելիտովն 389, Մելիսեդեկ 168, Մենանդրոս 103, Միքեթեանք 108, Միջագետք 112, Միսացիք 388, Միքայել 355, Միքե 195 (Միքիե 359), Մովդադ 357 (Բաղդատ. անդ), Մովսես 17, Յակովք 65, Յարիմ 248, Յեզարել 21, Յեսա 222, Յերոբովամ 21, Յեփթալեայ 359, Յիշով 357 (Յեսու 70, 357, 358), Յիսուս 5, Յոպպեացիք 385, Յովք 39, Յովել 359, Յովհաննես 30, Յովնան 54, Յովսափաք 359, Յովսեփ 131, Յորդանան 33, Յուդա 71 (Յուդաս 107), Նաբովք 21, Նաբոգոդոնոսոր 24, Նազարեք 229, Նաթան 18, Նեեման 350, Նիկողեմոս 378 (Նիկոլեմոս 282), Նոյ 15, Շամրին 21, Շամրիսք 117, Շամրտացի 172, 384, 399 (2 անգամ), 406, 407 (2 անգամ), 408, Շամրտոսիք 72, Շմաովն /Շմաոն 175, 182, 230, 269, 371 (Սիմոն /Սիմոն 36, 101 և այլն), Շուշան 361, Ոգիել 359, Ովսե 168, Որմիդդ 104, Պաղեստինացիք 108, Պարսք 108,

²⁰ Մեր ցանկում ընդգրկել ենք նաև ազգերի անունները:

²¹ Եղի ենք միայն առաջին հիշատակության էջերը, իսկ ասորական հատուկ անուններին համապատասխանող ձևերի դեպքում՝ բոլոր վկայությունները:

Պատոս 62, Պեպուզան 341, Պետրոս 27, Պիթովմեոս 389, Պիդատոս Պոնտացի 85, Պոդովմեոս 68, Պրիսկիդա 340, Պրոքոս 106, Սաքատով 141, Սաքել 393, Սամուել 54, Սամփսով 359, Սաուս 78, Սաուդ 346, Սափիրայ 112, Սելովամ 284, Սեմեի 20, Սինեական լեռն 33, Սիովն 207, Սկիթիանոս 108, Սոդոմ 259, Սոդոմոն 20, Սուրամատք 354, Սոփոնիա 278, Սպանիա 354, Վաղենտիանոս 104, Տաքիթա 112, (Դաքիթա 293), Տարսոն 386, Տերևիմոս 108, Տիբերիադ 175, Տիմոթեոս 391, Տիտոս 305, Տրովադա 413, Տրովացիք 389, Բախար 16 (2 անգամ), 17, 27 (Բահար 168), Բուքեն 183, Փառան 219, Փարթար Որմիզդ 98, Փարովն 69, Փելիկս 390, Փեստոս 390, Փենեհես 235, Փիլիպպեցիք 388, Փիլիպպոս 193, Փոնդիա 341, Քաղղեացիք 361, Քրիստոս 7:

Ինչպես տեսնում ենք, նշված 231 անուններից միայն հետևյալ տասն են հաճախատախանում ասորական անվանաձևերին՝ Ախազ, Եղիշա/Եղիշե, Յիշով, Ծամրին, Ծամրիտք, Ծամրտացի, Ծամրտություն, Ծմաովն/Ծմառն, Եուշան և Բախար, որ ինքնին մեծ բաժին չի կազմում հատուկ անունների ընդհանուր քանակի մեջ²²: Փաստերը ցույց են տալիս, որ հատուկ անունների այսպիսի ձևերը, որոնք խորթ են հնչում մեր ականջին, սովորական են եղել V դ. հայ մատենագրության համար: Այդ ժամանակ հայերենը դեռևս չէր կարողացել վերջնականապես զտել և մարսել թարգմանական հսկայածավալ գրականության, հատկապես Աստվածաշնչի միջոցով լեզվի մեջ թափանցած բազմաքանակ անունները: Եվ բոլորովին տարօրինակ չէ, որ ասորական անվանաձևերը հաճախ գործածված ենք տեսնում. բուն հայկական գրական հուշարձաններում և նույնիսկ հունարենից կատարված թարգմանություններում: Ինչպես Իրենեոսի «Ընդդեմ հերձուածոց» գրքի հայերեն թարգմանության առիթով նշել է Ն. Ակինյանը, ասորերենի հետքեր համարվող Եղիշաքեթ, Եղիշա, Ծամրտացի և այլ բառերը «շատ սովորական են հայերենի մեջ, և օրինակներ կարելի է ցույց տալ նաև Եսեքիոսի Քրոնիկոնի, Յովհ. Ոսկեբերանի Մատթեի, Եսայայի, Պատմոսի թղթոց (մեկնությունների՝ Լ. Տ.-Պ.) մեջ, գրություններ, որոնց լուծարելն թարգմանության վրայ

վաչրկեան միակ անհնար է երկրայի»²³: Ի դեպ, պետք է ավելացնել, որ նման հուշարձաններում հաճախ միևնույն անունը հանդես է գալիս մերթ ասորական, մերթ հունական ձևով: Վերը բերված անվանացանկից կարելի է նկատել, որ «Կոչումն ընծայութեան» երկում Եղիշա/Եղիշե անվան համար մեկ անգամ գործածված է Եղիսեսն ձևը, Յիշովի համար՝ երեք անգամ Յեսու, Ծմառն/Ծմառովնի համար՝ քաղմաթիվ անգամներ Սիմոն/Սիմովն և Բախարի համար՝ մեկ անգամ Բահար: Այսպիսով, կարող ենք եզրակացնել, որ ինչպես մեր բնագրում, այնպես և թարգմանական որևէ այլ հուշարձանում հատուկեմտ ասորական անվանաձևերի առկայությունը դեռևս բավարար չէ եկեղեցիների համար, որ թարգմանությունը կատարված է ասորերենից:

Կյուրեղի երկի հայերեն թարգմանության ճախօրինակին վերաբերող մյուս խնդիրը ձևակերպված է Հ. Տաշյանի այն դիտողության մեջ, թե «հայը շատ կը շեղի լուծարեմեն»²⁴: Ինչպես վերը նշվեց, մեր համեմատությունները ցույց են տալիս, որ հայերեն թարգմանությունը ոչ միայն համընթաց է հունարեն ճախօրինակին, այլև հաճախ պատճենում է նույնիսկ նրա շարադասական և բառակազմական առանձնահատկությունները: Եթե փորձենք մեկ բառով բնորոշել հայերեն բնագրի բնույթը, ապա այն կարող ենք կոչել **նշգրիտ** կամ **հարազատ** թարգմանություն:

Միակ ազատությունը, որ իրեն թույլ է տվել հայ թարգմանիչը, դա բառական ավելադրությունների առատ գործածությունն է: Այսպես, հետևյալ օրինակներում հունական ճախօրինակի մեկ բառի դիմաց հայերեն թարգմանության մեջ դրված է երկուսը. **կատարեալ կատարեցաւ** [18] = ἐτελέσθη [396], **բայց սակայն** [19] = πλὴν [397], **գիշանել ներել** [21] = συγκαταβῆναι [400], **արդար ճշմարիտ** [21] = δίκαιος [400], **առակ օրինակի** [27] = ὑπογράμμιος [424] և այլն: Հաճախ մեկ բառը վերարտադրված է նաև երեք հոմանիշներով, ինչպես՝ **հաշեր մաշեր և հալեր** [20] = ἐξέτρε [397], **բրեաց հան ընկեց** [25] = ἐξήνεχεν [405], **դարձեալ միսանգամ անդրեն** [27, 406] = πάλιν [424, 1028], **առեալ բարձեալ բերեր** [35] = δεικνύτα [456], **տնկեալ հաստատեալ կայցեն** [48] = τεθεμελιώσθη [457], **խաղալ գալ իջանել** [98] = κατελ-

²² Ս. Հովանջյանը Կյուրեղի երկի նորահայտ պատմիկներից բերում է նաև Ծառող անվանաձևը Սաւուդի փոխարեն. տե՛ս Ս. Հովանջյան, Նորահայտ պատմիկներ..., էջ 204, 227:

²³ Հ. Ն. Ակինեան, Ս. Իրենեոս հայ մատենագրության մեջ, «Հանդես ամսօրեայ», 1910, էջ 201:

²⁴ Տե՛ս Հ. Յ. Տաշյան, Յուդակ..., էջ 694:

Թեոփ [556], կանգնեաց հաստատեաց կացոյց [147] = Եղեցեալս [641] և այլն: Իսկ հեռակալ հատվածում հունարենի մեկ բառի դիմաց միանգամից դրված է նույնիսկ չորս բառ. «ճորափետուր զարդարեալ վառեալ թոռեալ» [35] = Եղեցեալս զարդարեալս թոռեալս [436]: Ոճական ավելադրության իր այս հակումով թարգմանիչն ակնհայտորեն տուրք է տվել ժամանակի գրական ճաշակի պահանջներին:

«Կոչումն բնծայութեան» երկի հայերեն թարգմանությունն աչքի է ընկնում եւս մի ուշագրավ հատկանիշով: Հունական նախօրինակում հանդիպող դիցաբանական հասկացություններն ու ազգերի անվանումները թարգմանիչը ոչ թե նույնությամբ ներմուծում է հայերեն բնագիր, այլ փոխարինում է հայ իրականության մեջ ընդունված համարվելով: Այսպես, Ζεὺς աստծու [760] անվան դիմաց նա դնում է մերթ Արամազդ [225], մերթ Որմիզդ [104], համապատասխանաբար Διὸς Զևս [997] տեղանունը թարգմանելով Որմիզդական քաղաք [385]: Հունական նախօրինակի Ἀργεῖον [461] անվան փոխարեն հայերեն բնագրում ունենք Աստղիկ [50], Ξανθός ամսանունը [838] հայերենում վերաբառադրված է Արեգ ամիս [280] ձևով, Ἀργεῖον-ը [869, 880]՝

Նեոն [303, 310 և այլն], Ἑλλάς-ը [1020, 1025]՝ հեթանոս [399, 404 և այլն], Σαρδάνιοι-ը [576]՝ Տաճիկ [108], Μήδων-ը [749, 756, 883]՝ Պարթև [218, 223, 314]: Միայն Միհր աստծու անունն է, որ Միհրեանցն քառում [108] թարգմանիչը պահպանել է հունական Μίθρα ձևով [880]: Հանրահայտ դիցաբանական և ազգագիտական հասկացությունների վերաբառադրման այսպիսի եղանակը նույնպես դրվար թե կարելի է նախօրինակի համեմատելական շեղում համարել:

Մնում է անդրադառնալ կյուրեղի հայերեն թարգմանության նախօրինակի հետ կապված վերջին խնդրին, որն արժարժիկ է Ս. Լիոնեի կողմից²⁵: Վերջինս, կասկած չունենալով հանդերձ այն հարցում, որ թարգմանությունը կատարվել է հունարենից, հայերեն բնագրի ավետարանական քաղվածքներում վեր է հանել մի շարք ընթերցվածներ, որոնք համընկնում են Աստվածաշնչի ասորական բնագրին: Այս երևույթը, տակալն, բանասերի կողմից հեշտությամբ բացատրվել է նրանով, որ թարգմանիչը մերթ ընդ մերթ գտնվել է Ավետարանների նախնական հայերեն թարգմանության ազդեցության տակ:

²⁵ St'u S. Lyonnet, Les origines..., p. 111-114.

